ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ՀԱՆՔԱՀՈՒՄՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով Տնտեսական միության ստեղծման մասին 1993 թվականի սեպտեմբերի 24-ի՝ Պայմանագրի եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների եւ ճյուղերի արտադրական կոոպերացիայի օժանդակության ընդհանուր պայմանների եւ մեխանիզմի մասին 1993 թվականի դեկտեմբերի 23-ի՝ Համաձայնագրի դրույթներով,

ելնելով տնտեսական եւ գիտատեխնիկական ոլորտներում փոխգործակցության զարգացման, գիտական, արտադրական եւ տնտեսական կապերի մեխանիզմի կատարելագործման նպատակահարմարությունից,

մեծ նշանակություն տալով հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ բանական օգտագործման, գեոէկոլոգիայի եւ շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների արդյունավետ լուծմանը,համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը նպաստում են հետեւյալ խնդիրների լուծմանը.

հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում համագործակցության համակարգմանը եւ զարգացմանը,

Կողմերի ժողովրդական տնտեսությունը եւ սպառման շուկան հանքային հումքով, ինչպես նաեւ դրա մշակումից ստացված արտադրանքով ապահովելուն,

լեռնահանքարդյունահանող եւ լեռնամշակող արտադրության կայունացմանը եւ հետագա զարգացմանը, հանքային հումքի բանական օգտագործման ապահովմանը՝ հաշվի առնելով Կողմերի ձեռնարկությունների միջեւ արտադրատեխնոլոգիական ձեւավորված կապերը:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերը, իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան, ջանքեր են գործադրում հանքային հումքի պակասուրդային եւ ռազմավարական տեսակների հանքատեղերի եւ դրանց մշակման հզորությունների օգտագործման, հանքային հումքի եւ դրա մշակումից ստացված արտադրանքի արտահանման ներուժի ավելացման, ներմուծումից կախվածության նվազեցման ծրագրերի իրականացման, օգտակար հանածոների պակասուրդային եւ ռազմավարական տեսակներով Կողմերի տնտեսությունների ապահովման հանքահումքային համակարգի պահպանման, հիմնարար եւ կիրառական խնդիրներով համալիր ներդրումային ծրագրերի իրականացման համար:

ՀՈԴՎԱԾ 3

Կողմերը միջոցառումներ են ձեռնարկում երկրահետախուզական, արդյունահանող եւ մշակող ճյուղերի զարգացման, դրանցում ներդրումներ կատարելու համար պայմանների ստեղծման, միջազգայնորեն ճանաչված պահանջների հիման վրա հանքային հումքի եւ դրա մշակումից ստացված արտադրանքի ստանդարտացման եւ սերտիֆիկացման բնագավառում համաձայնեցված քաղաքականության ձեւավորման համար:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը միջոցառումներ են ձեռնարկում երկրահետախուզական եւ լեռնաարդյունահանող ձեռնարկությունների համար համալիր սարքավորումներ եւ տեխնիկա մշակելու, պատրաստելու եւ ապահովելու համար:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը փոխգործակցում են գիտատեխնիկական եւ տեղեկատվական ապահովման, երկրաբանական միջավայրի մոնիտորինգի համակարգի, երկրաբանական գործընթացների երկրադինամիկ եւ աղետների կանխատեսումների պատրաստման, երկրատեղեկատվական վերլուծական համակարգերի եւ գիտական, ինժեներական եւ աշխատանքային կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման համար պայմանների ձեւավորման համար աշխատանքների համակարգման բնագավառներում:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը միջոցներ են ձեռնարկում հանքահումքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման եւ օգտագործման հետ կապված շրջաններում էկոլոգիական վիճակի բարելավման հիմնախնդիրների լուծման, ռեսուրս խնայող տեխնոլոգիաների եւ տեխնիկային ստեղծման եւ ներդրման, ինչպես նաեւ միջպետական մակարդակով սահմանամերձ տարածքների երկրաբանական միջավայրի էկոլոգիական մոնիտորինգի համակարգի զարգացման, ներառյալ համատեղ հետազոտությունների կատարման համար:

ՀՈԴՎԱԾ 7

Հանքահումքային համալիրի զարգացման ոլորտում համագործակցության համակարգման համար Կողմերը ստեղծում են ընդերքի հետախուզման, օգտագործման եւ պահպանության գծով Միջկառավարական խորհուրդ, որը գործում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող Կանոնադրության հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 8

Սույն Համաձայնագրի իրագործումը իրականացվում է Կողմերի համապատասխան մարմինների, կազմակերպությունների, ձեռնարկությունների եւ այլ տնտեսվարող սուբյեկտների միջեւ կնքված երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի, պայմանագրերի (կոնտրակտների) հիման վրա, այլ փոխհամաձայնեցված ձեւերով:

Համագործակցության կոնկրետ ուղղությունների աջակցության ձեւերի ընտրության եւ որոշման դեպքում Կողմերը ղեկավարվում են փոխադարձ շահերով:

ՀՈԴՎԱԾ 9

Կողմերը պայմանավորվում են հանքահումքային ռեսուրսների հետախուզման եւ օգտագործման ժամանակ կիրառվող հասկացությունների միասնականացման վերաբերյալ՝ միջազգային պահանջների հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերը իրականացնում են ընդերքի ուսումնասիրման, օգտագործման եւ պահպանության բնագավառում օրենսդրական ակտերի եւ նորմատիվ-իրավական փաստաթղթերի փոխանակում եւ միջոցներ են ձեռնարկում դրանց մերձեցման համար:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այլ միջազգային պայմանագրերից, որոնց մասնակից կարող են նրանք հանդիսանալ, բխող իրավունքները եւ պարտավորությունները:

ՀՈԴՎԱԾ 12

Պետական գաղտնիք կազմող տեղեկությունների օգտագործման հետ կապված հարցերի
լուծման դեպքում, Կողմերը ղեկավարվում են իրենց ազգային օրենսդրություններով եւ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից են նրանք հանդիսանում:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագրի կիրառման կամ մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջեւ խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով կամ օգտագործելով այլ միջազգային իրավունքի նորմերին չհակասող ընթացակարգեր:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագրում Կողմերի ընդհանուր համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից: Ներպետական ընթացակարգերը ավելի ուշ կատարած Կողմերի համար այն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումը ավանդապահին հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 16

Սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 2 ամիս հետո Կողմերը համապատասխան ազգային մարմինների խորհրդակցություն կանցկացնեն Համաձայնագրի իրագործման առաջնահերթ միջոցների որոշման համար:

ՀՈԴՎԱԾ 17

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամանակով:

ՀՈԴՎԱԾ 18

Յուրաքանչյուր Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալուց առնվազն 12 ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

ՀՈԴՎԱԾ 19

Սույն Համաձայնագիրը բոլոր Կողմերի համաձայնությամբ բաց է նրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ նման միացման մասին փաստաթղթերը ավանդապահին փոխանցելու միջոցով: Միանալը համարվում

է ուժի մեջ մտած ավանդապահի կողմից նման միանալու համաձայնության մասին Կողմերի վերջին հաղորդումը ստանալու օրվանից:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1997 թվականի մարտի 27-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Հանքահումքային ռեսուրսների
ուսումնասիրման, հետախուզման եւ
օգտագործման բնագավառում
համագործակցության մասին 1997
թվականի մարտի 27-ի
Համաձայնագրին կից

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԵՐՔԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ընդերքի հետախուզման, օգտագործման եւ պահպանության գծով Միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) ստեղծվում է Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ընդերքի ուսումնասիրման, հետախուզման, օգտագործման եւ պահպանության ոլորտներում համագործակցության զարգացման նպատակով, նպաստում է Համագործակցության մասնակից պետությունների արդյունավետ
գործունեության ձեւավորման եւ ապահովմանն ուղղված քաղաքականության պրակտիկ իրականացմանը:

Խորհրդի գլխավոր նշանակությունը կայանում է հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի եւ Անկախ Պետությունների Համագործակցության Լեռնային խարտիայի նպատակների եւ խնդիրների իրականացման մեջ, այդ թվում հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրի մասնակից պետությունների (այսուհետ՝ Համաձայնագրի մասնակից պետություններ) կողմից ձեռնարկվող համաձայնեցված գործողությունների միջոցով:

1. Խորհուրդը իր գործունեությունում ղեկավարվում է Անկախ Պետությունների Համագործակցության Կանոնադրությամբ, հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրով եւ սույն Կանոնադրությամբ:

2. Խորհուրդը իր գործունեությունը իրականացնում է սերտ փոխգործակցելով Տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտեի եւ Անկախ Պետությունների Համագործակցության կանոնադրական մարմինների հետ:

3. Խորհուրդը ձեւավորվում է Համաձայնագրի մասնակից պետությունների համապատասխան նախարարությունների եւ գերատեսչությունների ղեկավարներից՝ լիազոր
ներկայացուցիչներից, Խորհրդի անդամներից:

Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետություն Խորհրդում ունի մեկ ձայն:

4. Խորհրդի կազմի մեջ մտնում է Տնտեսական միության միջպետական տնտեսական կոմիտեի ներկայացուցիչը խորհրդակցական ձայնի իրավունքով:

2. ԽՈՐՀՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Խորհրդի հիմնական խնդիրները եւ գործառույթներն են.

1. Համագործակցության առաջնային ուղղությունների որոշումը, հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում Համաձայնագրի մասնակից պետությունների համաձայնեցված քաղաքականության համակարգում եւ անցկացում:

2. Համագործակցության շրջանակներում հանքահումքային ռեսուրսների եւ դրանց մշակումից (վերափոխումից) ստացված արտադրանքի շուկայի կայացում եւ զարգացում, այդ թվում Համաձայնագրի մասնակից պետությունների տնտեսվարող սուբյեկտների փոխշահավետ կոոպերացիոն կապերի վերստեղծման միջոցով, հաշվի առնելով իրավական
եւ տնտեսական նոր պայմանները:

3. Օժանդակություն ընդերքի, դրա հետախուզման եւ արդյունահանման մատչելիությանը՝ Համաձայնագրի յուրաքանչյուր մասնակից պետության օրենսդրությանը համապատասխան:

4. Ընդերքի երկրաբանական ուսումնասիրման, հանքահումքային հիմքի վերարտադրության եւ որակական բարելավման բնագավառում համատեղ ծրագրերի եւ աշխատանքների մշակման եւ իրագործման կազմակերպում:

5. Լեռնաարդյունաբերական համալիրի ձեռնարկությունների զարգացման եւ տեղակայման քաղաքականության ներդաշնակեցում:

6. Օժանդակություն առեւտրային պայմաններով հանքահումքային ռեսուրսների հետախուզման, արդյունահանման, մշակման (փոխակերպման) եւ օգտագործման բնագավառում կիրառվող նոր տեխնոլոգիաների մատչելիությանը:

7. Օգտակար հանածոների հանքատեղերի պաշարների բանական եւ համալիր օգտագործումն ապահովող պայմանների ստեղծում:

8. Անվտանգության բարձր մակարդակների ձեռքբերմանը եւ/կամ պահպանմանն ուղղված անվտանգության տեխնիկայի բնագավառում համատեղ ծրագրերի եւ աշխատանքների մշակման եւ իրագործման կազմակերպում, համագործակցություն հանքահումքային ռեսուրսների արդյունահանման եւ մշակման (փոխակերպման) ձեռնարկություններում խոշոր վթարների կանխման եւ հետեւանքների վերացման բնագավառում:

9. Շրջակա բնական միջավայրի պահպանության հիմնախնդիրների լուծմանը փոխհամաձայնեցված մոտեցումների մշակման եւ իրականացման եւ տվյալ բնագավառում
աշխատանքների կոնկրետ համատեղ ծրագրերի կազմակերպում:

10. Օժանդակություն Համաձայնագրի մասնակից պետությունների լեռնաարդյունաբերական համալիրներում ներդրումների եւ վարկերի ներգրավմանը, այդ թվում երրորդ երկրներից, Համաձայնագրի մասնակից պետությունների արտաբյուջետային աղբյուրներից միջոցների ներգրավման մեխանիզմների եւ պայմանների ստեղծում:

11. Գիտական հետազոտությունների առաջնային ուղղությունների, հեռանկարային նախագծային եւ փորձակոնստրուկտորական մշակումների ի հայտ բերում, նշված հետազոտությունների եւ մշակումների համակարգում, բաժնեմասային հիման վրա փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող աշխատանքների, նախագծերի եւ ծրագրերի ֆինանսավորում:

12. Գործող չափանիշների եւ տեխնիկական պայմանների միասնականացման, օգտակար
հանածոների հանքատեղերի հետախուզման եւ արդյունահանման բնագավառում նորմատիվ-մեթոդական փաստաթղթերի կատարելագործման, ներառյալ օգտակար հանածոների
պաշարների եւ այլ երկրաբանական տեղեկատվության դասակարգման եւ բալանսների համար միջոցների իրականացում:

13. Համաձայնագրի մասնակից պետությունների լեռնաարդյունաբերական համալիրների ձեռնարկությունների համագործակցության օժանդակությունը, այդ թվում ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների հետ, որոնք պատրաստ են կատարել

լեռնային սարքավորումների արդիականացման, վերանորոգման եւ պատրաստման, տեխնոլոգիաների մշակման եւ օգտակար հանածոների երկրահետախուզման, արդյունահանման, մշակման (փոխակերպման), դրանց տեղափոխման եւ օգտագործման հետ
կապված ծառայությունների կատարման պատվերներ՝ շրջակա բնական միջավայրի պահպանության ապահովման պայմանով:

14. Օժանդակություն կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման համար համակարգված միջոցառումների իրականացման, այդ թվում՝ երրորդ երկրների ուսումնական հաստատություններում, բիզնեսի, մարքեթինգի, կառավարման դպրոցների եւ դասընթացների կազմակերպման բնագավառում:

15. Խորհրդի իրավասության մեջ մտնող հարցերով Համագործակցության մյուս միջպետական եւ միջկառավարական մարմինների հետ փոխգործակցություն:

3. ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Իր խնդիրների եւ գործառույթների իրականացման համար, Խորհուրդը իրավունք ունի.

1. Համաձայնագրի մասնակից պետությունների համապատասխան գերատեսչություններից տեղեկություններ հարցնել, որոնք անհրաժեշտ են իր գործառույթների կատարման համար, ինչպես նաեւ՝ տեղեկություններ Խորհրդի որոշումների կատարման մասին:

2. Անկախ Պետությունների Համագործակցության պետությունների ղեկավարների Խորհրդի եւ Կառավարությունների ղեկավարների Խորհրդի, Համագործակցության մյուս մարմինների քննարկմանը սահմանված կարգով ներկայացնել Խորհրդի կողմից պատրաստված փաստաթղթերի նախագծերը:

3. Ստեղծել Խորհրդի մշտական կամ ժամանակավոր աշխատանքային եւ այլ մարմիններ, այդ թվում իրավաբանական անձի իրավունքներով օժտված, հաստատել դրանց
մասին կանոնադրությունները, որոշել դրանց գտնվելու վայրը, գործունեության եւ ֆինանսավորման կարգը, հաստատել հաստիքների թիվը եւ ծախսերի նախահաշվարկը, նշանակել այդ մարմինների ղեկավարներին եւ հսկողություն իրականացնել դրանց գործունեության նկատմամբ:

4. Մասնակցել միջպետական նախագծերի եւ ծրագրերի ֆինանսավորման աղբյուրների սահմանմանը:

5. Հանքահումքային ռեսուրսների ուսումնասիրման, հետախուզման եւ օգտագործման բնագավառում համագործակցել սույն Համաձայնագրի մասնակիցներ չհանդիսացող պետությունների համապատասխան մարմինների եւ միջազգային կազմակերպությունների հետ:

6. Մշակել եւ հաստատել իր աշխատանքի Կանոնակարգը, ինչպես նաեւ փոփոխություններ կատարել դրանում:

4. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԸ

1. Խորհրդի աշխատանքը, որպես կանոն, իրականացվում է Համաձայնագրի մասնակից պետություններում՝ Խորհրդի նիստերի անցկացման միջոցով:

2. Խորհրդի նիստերը անցկացվում են ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Համաձայնագրի ցանկացած մասնակից պետության նախաձեռնությամբ եւ Խորհրդի անդամների մեծամասնության համաձայնությամբ:

Խորհրդի նիստը իրավասու է, եթե այդտեղ ներկա են Խորհրդի անդամների կեսից ավելին:

3. Նիստում նախագահողի գործառույթները կատարում է Խորհրդի անդամը, որը ներկայացնում է այն պետությանը, որի տարածքում անցկացվում է նիստը: Նա էլ կատարում է Խորհրդի նախագահի պարտականությունները՝ մինչեւ հերթական նիստը:

4. Խորհրդի նիստերի անցկացման ծախսերը կրում է Համաձայնագրի այն մասնակից

պետությունը, որի տարածքում անցկացվում է Խորհրդի նիստը: Խորհրդի անդամների գործուղման հետ կապված ծախսերը կրում է ուղարկող պետությունը:

5. Խորհրդի անդամը իրավունք ունի անհրաժեշտ տեղեկություններ ստանալ Խորհրդի աշխատանքային եւ այլ մարմինների գործունեության, ընդունված որոշումների մասին, ինչպես նաեւ Խորհրդի իրավասության շրջանակներում քննարկման հանել ցանկացած հարց:

6. Խորհրդի նիստին, որպես դիտորդներ կամ փորձագետներ, կարող են հրավիրվել Համաձայնագրի մասնակից պետությունների շահագրգիռ նախարարությունների, գերատեսչությունների, պետական եւ հասարակական կազմակերպությունների ու ձեռնարկությունների, Համագործակցության կանոնադրական եւ ճյուղային մարմինների, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

7. Խորհրդի յուրաքանչյուր հաջորդ նիստի անցկացման վայրը, ժամկետը եւ նախնական օրակարգը որոշվում են Խորհրդի հերթական նիստի ժամանակ:

8. Խորհրդի որոշումները ընդունվում են Խորհրդի ներկա անդամների ձայների մեծամասնությամբ: Ծրագրերի եւ նախագծերի հաստատման, սույն Կանոնադրությունում փոփոխությունների մասին առաջարկությունների, ինչպես նաեւ ֆինանսական հարցերով Խորհրդի որոշումները ընդունվում են Խորհրդի անդամների ձայների երկու երրորդով:

9. Խորհրդի յուրաքանչյուր անդամ կարող է հայտարարել այս կամ այն հարցում իր ոչ շահագրգիռ լինելու մասին, ինչը որոշման ընդունման համար չպետք է դիտվի որպես խոչընդոտ:

10. Համաձայնագրի որեւէ մասնակից պետության շահերը անմիջական շոշափող Խորհրդի որոշումները չեն կարող ընդունվել նրա լիազոր ներկայացուցչի բացակայությամբ:

11. Խորհրդի աշխատանքային մարմնի գործառույթները դրվում են ՄՏԿ աշխատակազմի վրա:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1999 թվականի մարտի 4-ից: